ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/143

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Սմօգսոյուզ» ՍՊԸ և «Մամբա» ՍՊԸ /համատեղ գործունեության պայմանագիր/

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7» էլեկտրոնային աճուրդ, կարագի և մածունի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7-1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.06.2021թ.-ի թիվ 26/26-1/8742-2021 գրությամբ «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ի և «Մամբա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ն (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.05.2021թ.-ի թիվ ՊՆ/02/2783-2021 գրության հիման վրա, 01.06.2021թ.-ին «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ին և «Մամբա» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 01.06.2021թ.-ին:

02.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/143 համարի ծածկագիրը:

09.06.2021թ.-ին և 25.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.06.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.05.2021թ.-ի թիվ ՊՆ/02/2783-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Սմօգսոյուզ» ՍՊ ընկերության (համատեղ գործունեության պայմանագիր «Մամբա» ՍՊԸ հետ) միջև 18.01.2019թ. կնքված N ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները և դրան կից՝ 14.03.2019թ. կնքված համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. մայիսի 14-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը և Համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ Պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 18.05.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ի և «Մամբա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սմօգսոյուզ» ՍՊԸ-ի և «Մամբա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 02.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ին և «Մամբա» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ ՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.06.2021թ.-ի թիվ 26/26-1/8742-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/143 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ի և «Մամբա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ միջև

18.01.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված կարագ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում, հաշվի առնելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության պահանջները:

iv. Պատվիրատուի և «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ի և «Մամբա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ միջև 14.03.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ համաձայնագիր):

v. Համաձայնագիր թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի 2019թ.-ի մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ համապատասխանաբար 181011 կգ և 62795 կգ քանակներով:

vi. Պատվիրատուի և «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ի և «Մամբա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ միջև 30.08.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Փոփոխությունը (այսուհետ նաև՝ Փոփոխություն):

vii. Փոփոխության թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի 2019թ.-ի մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ համապատասխանաբար 181011 կգ և 62795 կգ քանակներով:

viii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 18.05.2021թ.-ին հրապարակված

պայմանագրի միակողմանի լուծման մասին 17.05.2021թ.-ի թիվ ՊՆՏ/2-609 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Սմօգսոյուզ» ՍՊ ընկերության {համատեղ գործունեության պայմանագիր «Մամբա» ՍՊԸ հետ) միջև 18.01.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7-1» ծածկագրով գնման պայմանագրի և դրան կից 14.03.2019թ.-ին կնքված թիվ 1 համաձայնագրի շրջանակներում Մասնակիցը 2019թ.-ի հոկտեմբեր ամսին պետք է մատակարարեր 21000 կգ «Կարագ /Կարագ/» ապրանքատեսակ, որից 6320 կգ չի մատակարարել, իսկ նոյեմբեր ամսին պետք է մատակարարեր 13011 կգ «Կարագ /Կարագ/», որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ.-ի մայիսի 14-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և Համաձայնագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.06.2021թ.-ի թիվ 26/26-1/8742-2021 գրությամբ «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ի և «Մամբա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից

հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր

մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ի և «Մամբա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ միջև 18.01.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար, իսկ նույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված կարագ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում, հաշվի առնելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության պահանջները:

Պատվիրատուի և «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ի և «Մամբա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ միջև 14.03.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի 2019թ.-ի մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ համապատասխանաբար 181011 կգ և 62795 կգ քանակներով:

Պատվիրատուի և «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ի և «Մամբա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ միջև 30.08.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Փոփոխության թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի 2019թ.-ի մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ համապատասխանաբար 181011 կգ և 62795 կգ քանակներով:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 18.05.2021թ.-ին հրապարակված պայմանագրի

միակողմանի լուծման մասին 17.05.2021թ.-ի թիվ ՊՆՏ/2-609 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Սմօգսոյուզ» ՍՊ ընկերության {համատեղ գործունեության պայմանագիր «Մամբա» ՍՊԸ հետ) միջև 18.01.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7-1» ծածկագրով գնման պայմանագրի և դրան կից 14.03.2019թ.-ին կնքված թիվ 1 համաձայնագրի շրջանակներում Մասնակիցը 2019թ.-ի հոկտեմբեր ամսին պետք է մատակարարեր 21000 կգ «Կարագ /Կարագ/» ապրանքատեսակ, որից 6320 կգ չի մատակարարել, իսկ նոյեմբեր ամսին պետք է մատակարարեր 13011 կգ «Կարագ /Կարագ/», որը չի մատակարարել, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ.-ի մայիսի 14-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և Համաձայնագիրը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ի և «Մամբա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 18.05.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»

կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ն և «Մամբա» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր/ խախտել է պայմանագրով նախատեսված և դրա

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր):

Սույն դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակիցները հանդես են եկել համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում), ուստի մասնակիցները պետք է կրեն համատեղ և համապարտ պատասխանատվություն, հիմք ընդունելով Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ ենթակետը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ին և «Մամբա» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.06.2021թ.-ի թիվ 26/26-1/8742-2021 գրությամբ «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ին և «Մամբա» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/143 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Սմօգսոյուզ» ՍՊԸ-ին և «Մամբա» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**